

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՆԻ

**ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՑՆԻՆԳՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՇՏԿՄԱՆ ԵՎ
ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԹ .00. 03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեության) մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ **Վլադիմիր Սևանի Կարապետյան**

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** Հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վազգեն Հենրիկի Մարգարյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Լաուրա Համբարձումի Պետրոսյան

**Առաջատար
կազմակերպություն՝** **ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ.
հոկտեմբերի 16-ին ժամ 12⁰⁰-ին Խաչատուր Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի
հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թ. օգոստոսի 30-ին:

**Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների**

դոկտոր, պրոֆեսոր՝



Վահո Երեմի Կարդանյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սոցիալ-հոգեբանական թրեյնինգային (ՄՀԹ) մեթոդների վերաբերյալ տեսափորձարարական հետազոտություններում վերլուծվում և քննարկվում են դրանց բովանդակության, կազմակերպման ձևերի, պայմանների, անձնային աճի և թրեյնինգային խմբի արդյունավետ զարգացման հնարավորությունները: ՄՀԹ-ի գործառնությունների ուսումնասիրմամբ բացահայտվում են մարդու կենսագործունեության բազմաթիվ կողմեր և նպատակամետ զարգացման հնարավորություններ, մինչդեռ ՄՀԹ գործառնությունների ընդլայնումը՝ մշտապես դիտարկվելով զարգացման գործընթացներում, բավարար չափով չի քննարկվել ավագ դպրոցականների հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացների հետ, չնայած ՄՀԹ-ը բովանդակային առումով ընկալվել է նաև վարքային տարբեր դրսևորումների շտկողական հնարավորությունների տեսանկյունով: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ՄՀԹ-ի գործառնությունների հետագա ընդլայնումն ուղղակիորեն կապել ոչ միայն կոնկրետ գործընթացների, թրեյնինգի մասնակիցների տարիքային և անհատական առանձնահատկությունների հետ, այլև ուսումնասիրել այն մեխանիզմները, որոնք կարող են հնարավորություն տալ ՄՀԹ-ի գործառնությունները դիտարկել նաև կոնկրետ մեխանիզմի առաջադրմամբ, որը պետք է վերաբերի թե՛ կրթության սուբյեկտներին, թե՛ նրանց հետ տարվող հոգեկարգավորման և հոգեշտկման գործընթացներին:

Հաշվի առնելով վերոնշյալ մեկնաբանությունը, անհրաժեշտ է կրթության ոլորտում կիրառվող ՄՀԹ-ը դիտարկել այնպիսի գործառնություններով, որոնք կնվազեցնեն առկա հակասությունները: Դա հնարավոր կլինի, եթե թրեյնինգային խումբը վերածվի թիմայինի և արդյունքներն էլ վերաբերեն ինչպես կրթության ոլորտին (խորքային, բազմակողմանի, անձնային), այնպես էլ վարքային կոնկրետ դրսևորումներին և առանձին հատկություններին: Կրթության ոլորտում ՄՀԹ-ի գործառնությունների նպատակամետ ընդլայնումն արդիական է նաև զարգացման արդյունքների գնահատման, թրեյնինգային խմբերի ազդեցությունների չափման նոր մոդելների և մեթոդների ներդրման տեսանկյունով ևս:

Հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանը: Հանդիսանալով ակտիվ խմբային հոգեբանական մեթոդ՝ սոցիալ հոգեբանական թրեյնինգի և նրա գործառնությունների ուսումնասիրություններն ի սկզբանե ի հայտ եկան որպես խմբային մեթոդների ուսումնասիրությունների արդյունք, քանի որ ՄՀԹ-ը ծագեց և զարգացավ խմբային մեթոդների ներդրման ճանապարհին: Ակտիվ խմբային մեթոդների հիմքում ընկած են հայտնի հոգեբանների աշխատանքներ Կ. Լևինի (թրեյնինգ-խմբեր), Կ.Ռոջերսի, Ռ. Շուտցի (հանդիպման խմբեր), Մորենայի (հոգեդրամա), Ֆ.Պերլզի

(գեշտալտթերապիա) և այլոք: Խմբային մեթոդների, նրանց գործառնությունների և մեխանիզմների սոցիոլոգիական առաջին ուսումնասիրությունների հեղինակներ էին Է. Դյուրգեյման ու Զ. Զիմմելը: Նրանց կատարած ուսումնասիրությունների արդյունքներն այս կամ այն չափով սկսեցին օգտագործվել հոգեթերապիայում: Թրեյնինգային խմբում կազմավորվող գործընթացների գիտատեսական բացատրությունը պատկանում է Ֆրանս Անտուան Մեսմերին (18-րդ դար):

Դիտարկելով անձի ձևավորման սոցիալական ասպեկտները, Զ. Ֆրոյդը և նրա հետևորդները իրենց պրակտիկայում կիրառեցին «խմբային հոգեվերլուծություն» եզրույթը: Ալֆրեդ Ադլերը կարծում էր, որ հատկապես խումբն է նշանակալից ազդեցություն ունենում մարդու իրական նպատակների ու արժեքների վրա և միաժամանակ օգնում է նրան ձևակերպելու դրանք: Թրեյնինգային մեթոդի մշակման և հետազոտման կարևոր նախապայման է համարվում Կ. Լևինի այն գիտափորձը, որի նպատակն էր փոխել մարդկանց սնվելու սովորություններն ու սննդի հանդեպ ստեղծված կարծրատիպերը: Խմբային մեթոդների հանդեպ օրեցօր աճող հետաքրքրության պայմաններում Մ.Ֆորվերգի ղեկավարությամբ մշակվեց սոցիալ-հոգեբանական թրեյնինգի մեթոդը, որն առավել շոշափելի կոնկրետ ու անվանական դարձրին ոլորտի հետազոտությունները: Հոգեբանական թրեյնինգը լայն տարածում ստացավ նաև խորհրդային հոգեբանության պրակտիկայում (Լ.Ա. Պետրովսկայա, 1982թ.): Ժամանակակից հոգեբանության ոլորտում շարունակվում են այս բնագավառի տարաբնույթ ասպեկտներին ուղղված հետազոտական աշխատանքները՝ թրեյնինգներ ուղղված մասնագիտական ինքնակողմնորոշմանը (Տ. Մորգովա), գործարար փոխգործակցության զարգացման հաղորդակցական գործոններին (Ե. Սիդարենկո): Հատկապես, այն պարագայում, որ թրեյնինգների կիրառման ոլորտները գնալով ընդլայնվում են, զուգահեռաբար ընդլայնելով հետազոտության սահմաններն ու դրանց հիման վրա լույս ընծայվող աշխատությունները: Տարեցտարի տարբեր բնագավառներում ավելանում են սոցիալ-հոգեբանական թրեյնինգներին վերաբերյալ գիտամեթոդական հետազոտությունները և տեսական վերլուծությունները, կան նաև կոնկրետ ուսումնասիրություններ նվիրված թրեյնինգների կիրառմանը կրթության ոլորտում (Գ. Մոնինա), սակայն դեռևս պարզորոշ չեն ուսումնասիրվել ու հստակեցվել սոցիալ-հոգեբանական թրեյնինգների կոնկրետ մեխանիզմներն ավագ դպրոցականների հոգեկարգավորման և հոգեշտկման գործընթացներում՝ նոր գործառնությունների բացահայտման և կիրառման հնարավորություններով: Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ սոցիալ-հոգեբանական մեթոդին ուղղված հետազոտությունները հիմնականում վերաբերում են մեթոդի էությանը, բովանդակային կողմերին, կիրառման առանձնահատկություններին և այլն,

սակայն բավարար չափով չեն ուսումնասիրվել սոցիալ-հոգեբանական թրեյնինգների հոգեշտկման և հոգեկարգավորման գործառնությունները:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ավագ դպրոցականների հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացներում սոցիալ-հոգեբանական թրեյնինգների գործառնությունների ընդլայնման և կոնկրետացման հիմքերը, դրանց համահարաբերակցության ուղիները՝ հիմնվելով մասնավորապես թիմաձևավորման և թիմակազմավորման գաղափարի վրա:

Հետազոտության հիմնական վարկածը. Ենթադրվում է, որ ՄՀԹ գործառնությունները կընդլայնվեն և կկոնկրետանան ավագ դպրոցականների հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացներում, եթե ՄՀԹ-ը համապատասխանեն թիմակազմավորման գործընթացի բովանդակությանը և տրամաբանությանը:

Հետազոտության հիմնական վարկածն ապացուցելու համար առաջադրվել են **մասնակի վարկածներ**, որոնք արտացոլում են նաև հետազոտության աստիճանականությունը:

Մասնակի վարկածներ՝ 1) սոցիալ-հոգեբանական թրեյնինգները կիրառելի են հոգեշտկողական և հոգեկարգավորման նպատակով, 2) կրթության համակարգում առկա են համապատասխան հոգեբանական հիմքեր թրեյնինգների, մասնավորապես, սոցիալ-հոգեբանական թրեյնինգների հոգեշտկողական և հոգեկարգավորման գործառնությունով կիրառման համար, 3) եթե սոցիալ-հոգեբանական թրեյնինգները կիրառվում են ավագ դպրոցականների հոգեշտկողական և հոգեկարգավորման գործընթացներում, ապա դրանք պետք է դրսևորվեն ողջ կրթական համակարգում, 4) Հնարավոր է, որ թրեյնինգի մասնակիցների հոգեշտկման և հոգեկարգավորման վրա առավել արդյունավետորեն ազդի թիմային աշխատանքը, քան գուտ խմբայինը, 5) սոցիալ-հոգեբանական թրեյնինգային ծրագիրը հնարավոր է ուղղել ոչ միայն ավագ դպրոցականների հաղորդակցման և շփման կոմպետենտության բարձրացմանը, այլև նրանցից կազմված խումբը (դասարանը) թիմի վերածելուն, 6) եթե թրեյնինգային գործընթացում ձևավորվում ու զարգանում են թիմային որակները, ապա հնարավոր է, որ դրանք հանգեցնեն ոչ միայն թիմային նպատակների արդյունավետ իրագործման, այլև թիմակիցներ դարձած թրեյնինգի մասնակից ավագ դպրոցականների անհատական փոփոխություններին, այնպիսի մակարդակներում, որոնցում ներառված են հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացները:

Հետազոտական խնդիրները բխում են նպատակից և առաջադրված վարկածից. 1) **վերլուծել** սոցիալ-հոգեբանական թրեյնինգը՝ որպես խմբային ազդեցության հնարավորությունների վրա հիմնվող մեթոդ, տեսական վերլուծությունների հիման վրա սահմանել «Թրեյնինգ»

եզրույթը գործառույթների տեսանկյունով, 2) **համադրել** հոգեշտկման, հոգեկարգավորման և թրեյնինգների հիմնական գործառույթները՝ համատեղելիության աստիճանի որոշման նպատակով, 3) **բացահայտել** կրթության ոլորտի այն օղակներն ու ուղղությունները, որտեղ առկա են թրեյնինգների կիրառման պայմանները, հատկապես հոգեշտկման և հոգեկարգավորման նպատակներով: Հիմնվելով վերոնշյալ ասպեկտների բացահայտման վրա, մատնանշել նաև ավագ դպրոցականների շրջանում հոգեշտկման և հոգեկարգավորման նպատակով սոցիալ-հոգեբանական թրեյնինգների կիրառման անհրաժեշտությունն ու հնարավորությունները, 4) **հիմնավորել** այն մոտեցումը, որ սոցիալ-հոգեբանական թրեյնինգը թիմաձևավորման գործառույթի իրագործման շնորհիվ հնարավոր է ավագ դպրոցականներից կազմված թրեյնինգային խումբը դարձնել թիմ, իսկ ավագ դպրոցականներին՝ թիմակիցներ, դրանով իսկ նպաստելով ավագ դպրոցականների հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացին, 5) **պարզաբանել** ավագ դպրոցականների հոգեկարգավորման և հոգեշտկման միջոցով թրեյնինգի կիրառման արդյունավետության, ինչպես նաև թրեյնինգի յուրաքանչյուր մասնակցի ձեռքբերումների գնահատման հարցը:

Հետազոտության օբյեկտը ՄՀԹ-ների կազմակերպման, պլանավորման, անցկացման գործընթացներն են: **Հետազոտության առարկան** սոցիալ-հոգեբանական թրեյնինգների լրացուցիչ գործառույթների բացահայտման գործընթացն է՝ հոգեշտկողական և հոգեկարգավորող գործառույթներով:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը բխում են վերոնշյալ ինդիքներից և ինչպես հիմնական, այնպես էլ մասնակի վարկածների հաստատման ու ապացուցման անհրաժեշտությունից: Դրանք հիմնված են թրեյնինգների, մասնավորապես ՄՀԹ-ի վերաբերյալ մի շարք հեղինակների (Լ. Ա. Պետրովսկայա, Տ.Վ. Ջայն, Ի.Վ. Վաչկով, Յու.Ն. Եմելյանով, Ռ. Բակլի, Ջ. Կեյսլ և ուրիշներ) աշխատանքների տեսական վերլուծությունների և ավագ դպրոցականների տարիքային հոգեբանական առանձնահատկություններին և կրթության ասպեկտներին վերաբերող մի քանի հեղինակների (Ռ.Ս. Նեմով, Ի. Ս. Կոն, Ա.Վ. Պետրովսկի և ուրիշներ) աշխատությունների վրա:

Հետազոտության մեթոդները և դրանց կիրառման հիմնավորումները: Ատենախոսության շրջանակում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները. 1) **տեսական վերլուծության մեթոդը**, որն ուղղված է բացահայտելու հետազոտվող թեմայի և երևույթների արդիականության, ուսումնասիրվածության աստիճանը, գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, 2) **Այգենկի հոգեկան վիճակի** ինքնագնահատման թեստը, որն անհրաժեշտ է տազնապայմության, ռիզիկոյության, ազդեցիվության և ֆրուստրացիայի գործոնների ուսումնասիրման համար, 3) **հարցաբաններ**, որոնք հոգեդիագնոստիկայի

առավել տարածված մեթոդներից են և արտացոլում են հարցվողի վերաբերմունքն այս կամ այն երևույթի կամ գործոնի նկատմամբ: Կիրառվել են մասնավորապես, անձնային **հարցարաններ**, որոնք ենթադրում են նաև ինքնահաշվետվություն՝ անհատական և խմբային, փակ (որտեղ կան պատասխանների տարբերակները) և բաց (որտեղ նախատեսված չեն պատասխանների տարբերակներ) տարատեսակներով, 4) **Հարցագրույցի** մեթոդ, որը հանդիսանում է հոգեբանական խոսքային-հաղորդակցական մեթոդ, 5) կիրառվել է հարցագրույցի **PARLA** համակարգը, որը մինչ այսօր չի դիտարկվել տարիքային հոգեբանության ոլորտում և չի կիրառվել ավագ դպրոցականների շրջանում, 6) **Միշորի** «Խմբային համախմբվածության ինդեքսի որոշման» մեթոդիկա, որտեղ խմբային համախմբվածության ինդեքսը որոշվում է հարցերի և դրանց համար նախատեսված պատասխանների տարբերակների միջոցով, 7) սոցիալ-հոգեբանական թրեյնինգի մեթոդ, որը կիրառվել է, մասնավորապես, թիմաձևավորող գործառույթով, 8) **Քանակական մեթոդներ (վիճակագրական և մաթեմատիկական)**, որոնք կիրառվել են հետազոտության տվյալների (արդյունքների) մշակման, քանակական և որակական ընդհանրացումների համար:

Հետազոտվողների անձնակազմը և հետազոտության փուլերը, մեթոդիկաների ընտրության հիմնավորումը՝ ըստ փուլերի:

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է 2014-2018 թվականներին: Հետազոտության բոլոր փուլերին ընդհանուր առմամբ մասնակցել է 600 սովորող Ստեփանակերտի տարբեր դպրոցներից, մասնավորապես Խ. Աբովյանի անվան թ. 1, Ե. Չարենցի անվան թ. 7 հիմնական դպրոցներից, Ա.Գ. Սախարովի անվան թ. 8 ավագ դպրոցից և ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղից:

Մեթոդիկաների **ընտրությունը** հիմնավորվել է՝ ըստ հետազոտական փուլերի, հոգեշտկողական և հոգեկարգավորման ակտիվությունն ապահովող միջավայրի:

Թրեյնինգի արդյունավետության և մասնակիցների անհատական ձեռքբերումները բացահայտելու նպատակով կատարել ենք նաև գրավոր հարցումներ: Թրեյնինգային աշխատանքներից որոշ ժամանակ անց (2018 թ.) ծրագրին մասնակից դասարանական թիմերում կիրառվել է հարցագրույցի PARLA համակարգը՝ մասնակիցների մոտ թիմային աշխատանքի կոմպետենցիաների գնահատման համար:

Հետազոտության գիտական նորույթը: Ավագ դպրոցականների հոգեշտկողական և հոգեկարգավորման գործընթացներում սոցիալ-հոգեբանական թրեյնինգների գործառույթներն ընդլայնվում և որոշակիանանում են խմբում թիմակազմավորման գործընթացների կազմակերպման հաշվին:

Հետազոտության տեսական նշանակությունը: Առաջադրված խնդիրների պարզաբանմամբ տեսականորեն կընդլայնվեն սոցիալ-հոգեբանական թրեյնինգների կիրառման սահմաններն ու ոլորտները հանրակրթության բնագավառում: Կձևավորեն նոր մոտեցումներ ինչպես սոցիալ-հոգեբանական թրեյնինգների կիրառման, այնպես էլ ավագ դպրոցում սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական, անձնային աճի ու ինքնակատարելագործման, հոգեկարգավորող ու հոգեշտկողական աշխատանքների նոր ձևերի ներդրման տեսանկյուններից:

Հետազոտության գործնական նշանակությունը: Փորձարարական ուսումնասիրության փաստացի տվյալները և արտածված արդյունքները կարող են կիրառվել հանրակրթության ոլորտում նպատակամետ սոցիալ-հոգեբանական թրեյնինգներ կազմակերպելիս՝ գործնականում հիմք ընդունելով թիմակազմավորման գործընթացի բացահայտ առավելությունները, հատկապես ավագ դպրոցականների հոգեշտկողական և հոգեկարգավորման գործընթացներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

- 1) փոխհարաբերությունների կայացման գործընթացում և հատկապես թրեյնինգներում, հաղորդակցումը և շփումը որոշիչ դեր ունեն,
- 2) անհատի վրա խմբի ազդեցությունը փաստորեն հոգեբանական ազդեցության գործոն և միջոց է,
- 3) սոցիալ-հոգեբանական թրեյնինգները խմբային ազդեցության պայմաններում վերածվում են հոգեշտկողական, հոգեկարգավորման միջոցների,
- 4) ավագ դպրոցում թրեյնինգների կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է հոգեշտկող և հոգեկարգավորող գործառույթների իրականացման ուղիների ընտրությամբ:
- 5) ՄՀԹ-ում համադրելի ու համատեղելի են հոգեշտկման և հոգեկարգավորման հիմնական գործառույթները,
- 6) ավագ դպրոցականների շրջանում հոգեշտկման և հոգեկարգավորման նպատակով սոցիալ-հոգեբանական թրեյնինգների կիրառումը նպատակային է,
- 7) սոցիալ-հոգեբանական թրեյնինգին բնորոշ է նաև թիմաձևավորող գործառույթը,
- 8) սոցիալ-հոգեբանական թրեյնինգը որոշ լրացուցիչ պայմանների առկայությամբ իրականացնում է թիմաձևավորման գործառույթ, քանի որ թրեյնինգային խումբը կարող է վերածվել թիմի՝ դրանով իսկ նպաստելով թրեյնինգի մասնակիցների հոգեշտկմանը և հոգեկարգավորմանը,
- 9) ավագ դպրոցականների հոգեկարգավորմանը և հոգեշտկմանը միտված թրեյնինգի կիրառումն արդյունավետ է և նպաստում է թրեյնինգի յուրաքանչյուր մասնակցի ձեռքբերումներին:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության տեսական դրույթները և գործնական արդյունքները պարբերաբար զեկուցվել են Խ. Աբովյանի անվան Տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի նիստերում, Արցախի և Շիրակի պետական համալսարաններում կազմակերպված գիտական սեմինարներում և գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Ներկայացված են 24 աղյուսակ, 18 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը 174 էջ է, հավելվածները՝ 16 էջ:

ԱՏԵՆԱՊՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, տրված է հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանը, ձևակերպված են հետազոտության նպատակը, հիմնական և մասնակի վարկածները, հետազոտության աստիճանականությունը, խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները և դրանց կիրառման հիմնավորումները, հետազոտվողների անձնակազմը և հետազոտության փուլերը: Ներկայացված են մեթոդիկակաների ընտրության հիմնավորումը, հետազոտության փուլերը, գիտական նորությունը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին**՝ «Սոցիալ-հոգեբանական թրեյնինգի էությունը, տեսակները և հոգեբանական վերլուծությունը տարաբնույթ գործառնություններով: Թրեյնինգների կիրառումը կրթության ոլորտում» գլխում անդրադառնում ենք սոցիալ-հոգեբանական թրեյնինգի՝ որպես խմբային մեթոդի ծագմանն ու կայացմանը, կրթության ոլորտում կիրառման առանձնահատկություններին: Առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Դրանցից առաջինում անդրադարձ է կատարվում մեթոդի էությանը՝ ուղղված շփման և հաղորդակցման կոմպլեքսնության բարձրացմանը, ծագման հիմքերին, ինչպես նաև տարբեր հեղինակների կողմից սոցիալ-հոգեբանական թրեյնինգին տրված բնորոշումներին, որոնց տեսական վերլուծությունների հիման վրա մեր կողմից ևս ձևակերպվել է մեթոդի բնորոշում: «Սոցիալ-հոգեբանական թրեյնինգի կազմակերպման առանձնահատկությունները և հիմնական գործառնությունները» վերնագրով ներկայացվում են ՍՀԹ-ի հիմնարար սկզբունքները, թրեյնինգային մեթոդների դասակարգման տարբերակները, կազմակերպման և անցկացման արտաքին ու ներքին չափորոշիչները, հիմնական գործառնությունները: Սոցիալ-հոգեբանական թրեյնինգների մոդելների վերլուծությունը տրվում է առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Սոցիալ-հոգեբանական թրեյնինգների մոդելների վերլուծությունները», որտեղ խոսվում է թրեյնինգի տարաբնույթ մոդելների, հիմնական կոնցեպտուալ

ուղղվածությունների մասին: **Առաջին գլխի վերջին ենթագլխում՝** «Թրեյնինգների կիրառումը կրթության համակարգում և ներդրման հնարավորությունները Արցախում» ներկայացվում է արցախյան կրթահամակարգի հոգեբանական անվտանգության առկա խնդիրները և այն ասպեկտները, որտեղ հնարավոր է թրեյնինգների կիրառումը, ինչպես նաև թրեյնինգի՝ որպես մանկավարժական հոգեբանության մեթոդի ներդրման հնարավորություններն ու ուղղությունները: **Երկրորդ գլխում** անդրադառնում ենք ավագ դպրոցականների հետ ՄՀԹ-ի հոգեշտկողական և հոգեկարգավորող գործառույթների կիրառման հիմքերին և ուղղություններին, միաժամանակ ներկայացնելով «Հոգեշտկում» և «Հոգեկարգավորում» հասկացությունները: «Հոգեշտկողական գործունեության էությունը, տիպերը (տեսակները)» վերտառությամբ ենթագլխում ներկայացվում են հոգեշտկողական աշխատանքների առանձնահատկությունները: Հոգեկարգավորման գործընթացը պարզաբանվում է երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Հոգեկարգավորման հասկացության մեկնաբանումը և տիպերը (տեսակները)», իսկ հինգերորդ ենթագլխում ներկայացվում են թրեյնինգի հոգեշտկողական և հոգեկարգավորող գործառույթները և դրանք դիտարկվում ավագ դպրոցականների հետ տարվող հոգեբանական աշխատանքում: Ատենախոսության **երրորդ գլխում՝** «ՄՀԹ-ում թիմակազմավորման գործընթացը՝ որպես ավագ դպրոցականների հոգեշտկմանը և հոգեկարգավորմանը նպաստող գործիքակազմ», ներկայացվում է ՄՀԹ-ի կիրառմամբ թիմակազմավորման ազդեցությունը ավագ դպրոցականների հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացների վրա, ի հաշիվ նրանց շփման կոմպիտենտայնության բարձրացման: Թիմաձևավորման և թիմակազմավորման գործառույթները դիտարկել ենք որպես ավագ դպրոցականների հոգեշտկմանը և հոգեկարգավորմանը նպաստող գործոններ, պարզաբանել ենք թրեյնինգային խումբը թիմի վերածելու անհրաժեշտությունը և որպես ցուցանիշ դիտարկել խմբային համախմբվածության ինդեքսը: Արդյունքների աղյուսակային վերլուծությունը երկու խմբերի ընդհանուր մասնակիցների թվաքանակի մակարդակում ունի հետևյալ տեսքը (աղ. 1).

Աղյուսակ 1. Հարցարանի կիրառման արդյունքները նախքան թրեյնինգը և թրեյնինգից հետո (1-ին խումբ)

| Հարցարանի կիրառում (1-ին խումբ) | Թիմային համախմբվածության նախատր. ցածր աստիճան | Թիմային համախմբվածության նախատր. բարձր աստիճան |
|---------------------------------|---|--|
| Նախքան թրեյնինգը n=12 | 9 | 3 |
| Թրեյնինգից հետո n=12 | 2 | 10 |

Ինչպես դժվար չէ նկատել թրեյնինգային առաջին խմբում նախքան թրեյնիզը 12 մասնակիցներից միայն 3-ն էին նախատրամադրված թիմային աշխատանքի: Իսկ թրեյնինգի ավարտից հետո այդ թիվը հասել է 10-ի (աղ. 2)

Աղյուսակ 2. Հարցարանի կիրառման արդյունքները կիրառման արդյունքները նախքան թրեյնինգը և թրեյնինգից հետո (2-րդ խումբ)

| | | |
|---------------------------------|---|--|
| Հարցարանի կիրառում (2-րդ խումբ) | Թիմային համախմբվածության նախատր. ցածր աստիճան | Թիմային համախմբվածության նախատր. բարձր աստիճան |
| նախքան թրեյնինգը n=12 | 11 | 1 |
| թրեյնինգից հետո n=12 | 3 | 9 |

Ինչպես կարելի է նկատել թրեյնինգային երկրորդ խմբում նախքան թրեյնիզը մասնակիցներից միայն մեկն էր նախատրամադրված թիմային աշխատանքի: Իսկ թրեյնինգի ավարտից հետո այդ թիվը հասել է 9 մասնակցի: Միշորի մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացանք հետևյալ պատկերը (աղ. 3, 4).

Աղյուսակ 3. Միշորի մեթոդիկայի կիրառման արդյունքներ թրեյնինգից հետո (1-ին խումբ)

| | | | | | |
|--------|--------------------------------------|---------------|-------|--------------|------|
| | Խմբային համախմբվածության մակարդակներ | | | | |
| Խումբ | Բարձր | Միջինից բարձր | Միջին | Միջինից ցածր | Ցածր |
| Առաջին | n=1 | n=4 | n=4 | n=2 | n=1 |

Աղյուսակ 4. Միշորի մեթոդիկայի կիրառման արդյունքներ թրեյնինգից հետո (2-րդ խումբ)

| | | | | | |
|---------|--------------------------------------|---------------|-------|--------------|------|
| | Խմբային համախմբվածության մակարդակներ | | | | |
| Խումբ | Բարձր | Միջինից բարձր | Միջին | Միջինից ցածր | Ցածր |
| Երկրորդ | n=2 | n=3 | n=6 | n=1 | n=0 |

Թրեյնինգների արդյունավետությունը հավաստող տվյալներն ու մասնակիցների անհատական հոգեբանական ձեռքբերումներն արտացոլված են երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Թրեյնինգի արդյունավետությունը և թրեյնինգի մասնակիցների անհատական հոգեբանական ձեռքբերումները»: Թրեյնինգից հետո ավագ դպրոցականների հոգեբանական նոր ձեռքբերումների մակարդակները ցույց են տալիս, որ էական տեղաշարժեր են տեղի ունեցել իմացական, վարքային և հուզական տարրերի դրսևորումներում: Ատենախոսության մեջ աղյուսակով ցույց են տրված մակարդակների տեղաշարժերը:

Հաստատողական գիտավորներում օգտագործված մեթոդիկաների շրջանակում բացահայտվել են հուզական, վարքային, իմացական գործընթացների տվյալները: Պարզվել է թրեյնինգի վերջնարդյունքների բաղադրիչների միջև կապերը և դրանց առավելագույն ազդեցությունը միմյանց վրա: Քանակական վերլուծությունները կատարվել են Excel-T.Test ծրագրով: Առավել բարձր է վարքային և իմացական բաղադրիչների միջև կապը՝ $R = 0,9244$: Այս իրողությունը բացատրվում է նրանով, որ թրեյնինգային ծրագրում ընդգրկված վարժանքները (դերային խաղեր, մարմնային վարժություններ և այլն), նախևառաջ ուղղված են վարքային դրսևորումներին: Մասնակիցները սկզբնական փուլում դրանք կատարում են, որպես մարզիչի «հանձնարարություն»: Ավարտական փուլի քննարկումների արդյունքում, ըմբռնվում է վարքային դրսևորումների կոգնիտիվ կողմը: Այս փաստարկի հետ ուղղակիորեն կապված է այն հանգամանքը, որն արձանագրվել է որպես հուզական և իմացական բաղադրիչների միջև առկա $R = 0,8105$ բարձր ցուցանիշ: Այն, ինչը հուզականորեն հագեցված է, առավել շատ է հետաքրքրում և լավ է ամրապնդվում հիշողության մեջ, քանի որ ոչ միայն իմաստավորվում է, այլև մասնակիցն առավել շատ է հակված խորանալու երևույթների և գործընթացների իմացության մեջ: Excel ծրագրով համահարաբերական կապերի բացահայտմամբ, բարձր ցուցանիշ է արձանագրվել նաև վարքային և հուզական բաղադրիչներում՝ $R = 0,9553$: Սա բացատրվում է նրանով, որ ոչ միայն հույզերը կարող են առաջացնել համապատասխան վարքային դրսևորումներ, այլև վարքային դրսևորումների միջոցով կարելի է հասնել հուզական վիճակի փոփոխության: Թրեյնինգային ծրագրի սկզբում մասնակիցների հիմնական մասը ընդգրկվում էր նույնիսկ չկամությամբ, բայց ընթացքում նկատվում էր ակտիվացում, հետաքրքրության աճ և այլն: Հակառակ պարագայում՝ հուզական բաղադրիչը վարքայինի հետ համեմատելու դեպքում, արձանագրվել է միջին ցուցանիշ՝ $R = 0,4775$: Նախքան թրեյնինգային ծրագրի մեկնարկն ավագ դպրոցականներից կազմված երկու թրեյնինգային խմբի անդամներն խստորոշվել են Այզենկի «Հոգեկան վիճակի ինքնագնահատման» թեստի միջոցով, որի ընթացքում ստացված տվյալների համար որոշվել է նաև կանխատեսվող՝ f_e արդյունքը : Որոշվել են տագնապայնության f_0 և f_e մակարդակները թրեյնինգից առաջ, տագնապայնության կանխատեսվող մակարդակը (f_e), տագնապայնության իրական մակարդակը (f_0), Ֆրուստրացիայի իրական մակարդակը (f_0), Ֆրուստրացիայի կանխատեսվող մակարդակը (f_e), Ֆրուստրացիայի f_0 և f_e մակարդակները թրեյնինգից առաջ, ազրեսիվության f_0 և f_e մակարդակները թրեյնինգից առաջ, ռիզիկոյան f_0 և f_e մակարդակները թրեյնինգից առաջ, որոնք ցույց են տալիս թրեյնինգային խմբի իրական վիճակը և այդ ցուցանիշները շտկելու անտրամեջտությունը:

Որպես հոգեշտկողական ծրագիր կիրառվել է ՍՀԹ: Թրեյնինգային ծրագրից հետո կրկնակի R-թեստավորման են ենթարկվել նրանք, ում մոտ արձանագրվել էին բարձր ցուցանիշներ տազնապայմանության, ֆրոստրացիայի, ագրեսիվության և ռիզիդության մակարդակներում, իսկ դրանք գործոններ են, որոնք ենթակա են հոգեշտկման ու հոգեկարգավորման:

Համաձայն Խի-քառակուսու հայտանիշով կատարած քանակական ուսումնասիրության՝ արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները (աղյուսակ):

Աղյուսակ 5. Խի-քառակուսու հայտանիշի տվյալները

| χ^2 | Տազնապայմանության | Ֆրոստրացիայի | Ագրեսիվության | Ռիզիդության |
|-----------------|-------------------|---------------------|-------------------|--------------------|
| $\chi^2 = 19,7$ | $\chi^2 = 81,50$ | $\chi^2 = 38, 4432$ | $\chi^2 = 42,836$ | $\chi^2 = 50,2826$ |

Ստացված տվյալները գերազանցում են χ^2 $K=11-1=11$ ազատության աստիճանը, որը տվյալ աղյուսակում 19, 7 է, հետևաբար հավաստի են տվյալները և թրեյնինգի մասնակից ավագ դպրոցականների մոտ տեղի է ունեցել հոգեշտկողական և հոգեկարգավորող գործընթացներ վերոնշյալ մակարդակներում: Փաստը խոսում է այն մասին, որ ՍՀԹ-ն ավագ դպրոցականների հետ տարվող աշխատանքներում իրագործում է հոգեշտկող և հոգեկարգավորող գործառույթներ:

Թրեյնինգի արդյունավետությունը ստուգելու համար 2018 թվականի փետրվար-մարտ ամիսներին թրեյնինգային խմբերի մասնակիցների հետ անց ենք կացրել նաև կոմպետենցիաների պարզաբանմանն ուղղված հարցազրույց՝ PARLA համակարգով: Այս ասպեկտում որպես կոմպետենցիաներ ի նկատի ենք ունեցել վարքային այն դրսևորումները, որոնք թույլ կտան ավագ դպրոցականին լինել առավել հաջողակ սոցիալ-հոգեբանական ասպեկտում և թիմային աշխատանքներում: Տվյալ մեթոդիկայի կիրառումը նպատակ ուներ պարզելու, թե ինչքանով են պահպանվել մասնակիցների մոտ անձնային փոփոխությունները թրեյնինգային ծրագրից մոտ մեկ տարի անց: Արդյունքներն (տես՝ հավելված 6) ընդհանրացված ներկայացված են ստորև (աղ. 11):

Աղյուսակ 6. PARLA մոդելի կիրառման ընդհանրացված արդյունքներ

| Մասնակիցների ընդհանուր քանակը | Թիմային աշխատանքի նախատր. պահպանվել է | Թիմային աշխատանքի նախատր. չի պահպանվել | Թիմային աշխատանքի նախատր. կրում է երկակի բնույթ |
|-------------------------------|---------------------------------------|--|---|
| n=24 | n=14 | n=6 | n=4 |

Աղյուսակից երևում է, որ թրեյնինգի արդյունավետությունը 100 տոկոսով չի պահպանվել, եթե թրեյնինգից անմիջապես հետո կատարված

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թիմային աշխատանքի նախատրամադրվածությունը բարձր և միջինից բարձր է 19-ը մասնակցի մոտ, ապա մեկ տարի անց այդ ցուցանիշը նվազել է 5-ով: Վերոնշյալից կարելի է եզրահանգել, որ, ինչպես յուրաքանչյուր գործունեություն, թրեյնինգը ևս ունի իր թույլ կողմերը:

Թրեյնինգի արդյունավետության գնահատման մակարդակում կարելի է արձանագրել, որ մասնակիցների վրա ունեցած ազդեցությունները կարող են նաև ժամանակավոր լինել և թրեյնինգից ամիսներ հետո դրանք, հնարավոր է, թուլանան, իսկ որոշ փոփոխություններ կարող են ի հայտ գալ որոշ ժամանակ անց և թրեյնինգի ընթացքում ու թրեյնինգից հետո կատարված գնահատումներում դրանք կարող են չարտացոլվել: Որոշ փոփոխություններ կարող են այնքան խորը լինել, որ չնկատվեն արտաքին դիտման ընթացքում և նույնիսկ լրիվությամբ չգիտակցվեն մասնակցի կողմից: Սակայն PARLA մեթոդով ուսուցանելիս թիմի անդամներն ի վիճակի են պատճառահետևանքային կապերով վերծանել կոնկրետ իրավիճակները, բացահայտել առկա դժվարությունները և խմբի անդամների հետ քննարկումների միջոցով գտնել կոնկրետ դժվարությունը հաղթահարելու իրատեսական լուծումները:

Ընդհանուր առմամբ երրորդ գլխում ներկայացրել ենք ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության հիմնական մասը, դրանց արդյունքները, արդյունքների հիման վրա կատարված վերլուծությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև շարադրում ենք հիմնական եզրահանգումներն ըստ հետազոտության խնդիրների.

1) Տեսական գրականության վերլուծության հիման վրա հիմնավորվում է, որ թրեյնինգները դիտարկել որպես խմբային ազդեցության մեթոդ, միջոց կամ համակարգ թերևս անբավարար է, քանի որ սոցիալ-հոգեբանական թրեյնինգն ուղղված է համագործակցային, փոխլրացնող գործունեության, փոխազդեցության կամ փոխլրացման՝ հնարավոր շտկման ու կարգավորման միջոցներով ու մեթոդներով: Այն իր գործառույթների տեսանկյունով միտված է հաղորդակցման ու շփման կատարելագործման ճանապարհով յուրաքանչյուր մասնակցի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը, որպես վերջնարդյունք:

2) ՍՀԹ-ի, հոգեշտկման և հոգեկարգավորման գործընթացների համադրման արդյունքում սոցիալ-հոգեբանական թրեյնինգները դիտարկվել են հոգեշտկողական և հոգեկարգավորող գործառույթներով, և պարզել ենք, որ սոցիալ-հոգեբանական թրեյնինգների համար բնութագրական են նման գործառույթները: Պարզվում է, որ թրեյնինգի ողջ ընթացքը միտված է ոչ միայն հոգեբանական ախտորոշման, շտկման ու

կարգավորման գործընթացներին, այլ նաև թրեյնինգի ընթացքում արձանագրված ձեռքբերումների զարգացմանը, ինչուև և արտահայտվում են թրեյնինգի զարգացնող գործառույթները: Վերոնշյալ գործառույթները կիրառվում են հոգեշտկման ու հոգեկարգավորման գործընթացներում: Եվ՝ հոգեկարգավորումը, և՛ հոգեշտկումը ունեն այնպիսի գործառույթներ (ախտորոշիչ, զարգացնող, հոգեթերապեւետիկ, ուսուցանող և այլն), որոնք կիրառվում են սոցիալ-հոգեբանական թրեյնինգների ընթացքում, քանի որ համընկնում են վերջինիս գործառույթներին: Իսկ սոցիալ-հոգեբանական թրեյնինգների հոգեշտկող և հոգեկարգավորող ազդեցությունը դիտարկվում է թիմային խմբի ազդեցության մեջ, որով բացահայտվում են խմբի մասնակիցների մեջ առկա վարքային և հուզական շեղումները, բացի այդ՝ եթե խումբը կազմավորված է համատեղելիության սկզբունքով, ապա մասնակիցները հակված են չթաքցնելու իրենց մոտ առկա խնդիրները, դրանով իսկ ապահովելով ախտորոշիչ գործառույթը: Խումբը ունակ է խմբային նորմերի, վարքի օրինակելի ձևերի, կառուցողական քննադատությունների միջոցով նպաստելու առկա հոգեբանական խնդիրների շտկմանն ու կարգավորմանը՝ ապահովելով շտկող և կարգավորող գործառույթը: Վիճակագրական տվյալների արդյունքում բացահայտվել է, որ տարիքային տարբեր խմբերում տազնապայտությունը, ֆրուստրացիան, ազդեցիվությունը, ռիզիկոությունը առկա են, մինչդեռ թիմակազմավորման հիմքի վրա կառուցված թրեյնինգի պայմաններում տեղի է ունենում ցուցանիշների փոփոխություն, որը հավաստի է վիճակագրական տվյալների մշակման գործակիցներով:

3) Ավագ դպրոցականներից կազմված թրեյնինգային խումբը իր գործառույթները լիարժեք իրագործում է թիմակազմավորման գործընթացում, քանի որ դրսևորվում են թիմին առավել բնորոշ հատկանիշները, փոխադարձաբար միմյանց լրացնող, նյարդային լարվածությունը մեղմացնող իրողությունները, որոնք բնորոշ են Արցախի դպրոցականներին: Թրեյնինգից առաջ և թրեյնինգից հետո Սիշոռի մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված տվյալների քանակական վերլուծությունը Excel ծրագրով ցույց է տվել, որ համախմբվածության մակարդակի նկատելի աճ է արձանագրվել առավելապես թրեյնինգային երկրորդ խմբում՝ $R=0,9116$: Ավագ դպրոցականների խմբերում, լինի դա թրեյնինգային խումբ, թե դասարանական հանրույթ, թիմակազմավորումը կնպաստի խմբի հոգեկարգավորող և հոգեշտկող գործառույթի արդյունավետ իրագործման աստիճանի բարձրացմանը:

4) Սոցիալ-հոգեբանական թրեյնինգը կիրառվում է թիմաձևավորման գործառույթով և դրանով ապահովում է խմբի միջոցով արդյունավետ հոգեշտկում և հոգեկարգավորում: Մասնակիցներից յուրաքանչյուրի անհատական ձեռքբերումները արձանագրվում են ինչպես վարքային, այնպես էլ հուզական և իմացական ասպեկտներում: Հաստատողական

գիտափորձերում օգտագործված մեթոդիկաների շրջանակում ստանդարտացվել են այն տվյալները, որոնք իրականացնում են հուզական, վարքային, իմացական գործընթացները: Պարզվել են արդյունքների համապատասխան բաղադրիչների միջև կապերը: Առավել բարձր է վարքային և իմացական բաղադրիչների միջև կապը՝ $R=0,9244$: Արձանագրվել է նաև բարձր ցուցանիշ հուզական և իմացական բաղադրիչների միջև՝ $R=0,8105$: Բարձր ցուցանիշ է արձանագրվել վարքային և հուզական բաղադրիչներում՝ $R=0,9553$: Հակառակ պարագայում՝ հուզական բաղադրիչը վարքայինի հետ համեմատելու դեպքում, արձանագրվել է միջին ցուցանիշ՝ $R=0,4775$:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ հրապարակներում:

1. Ավանեսյան Ա.Ս. Հոգեբանական թրեյնինգի /վարժեցման/ ծագումը գործնական հոգեբանության և հոգեթերապիայի խմբային մեթոդների զարգացման ճանապարհին, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2006 թ, էջ 125-129
2. Ավանեսյան Ա.Ս. Արցախյան կրթական միջավայրի հոգեբանական անվտանգության մի շարք հարցեր «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Լրատու /գիտական հոդվածների պարբերական ժողովածու/, Երևան 2014թ, էջ 363-367
3. Ավանեսյան Ա.Ս. Հոգեբանական թրեյնինգների կիրառման առանձնահատկությունները կրթության ոլորտում, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Լրատու /գիտական հոդվածների պարբերական ժողովածու/, Երևան, 2015թ, էջ 368-375
4. Ավանեսյան Ա.Ս. Թրեյնինգային խմբի և թիմի էության գործառույթների համեմատությունները ու համադրությունները որպես թրեյնինգային խմբի թիմակազմավորման հիմք ԱրՊՀ գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2016թ, էջ 215-222
5. Ավանեսյան Ա.Ս. Թրեյնինգների կիրառման հիմնական բովանդակային ուղղությունները կրթահամակարգի տարբեր օղակներում, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Լրատու /գիտական հոդվածների պարբերական ժողովածու/, Երևան, 2017թ, էջ 350-359
6. Ավանեսյան Ա.Ս. Ավագ դպրոցականների հաղորդակցման գործունեության բաղադրիչներն ու հոգեբանական առանձնահատկությունները, ՀՊՄՀ-ի «Գիտական տեղեկագիր», № 2-3 (31-32), Երևան, 2017թ, էջ 15-19
7. Ավանեսյան Ա.Ս. Թիմային աշխատանքը որպես ավագ դպրոցականների հոգեբանական խնդիրների լուծման հոգեշտկման ու հոգեկարգավորման գործոն, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017թ, էջ 105-110

8. Ավանեսյան Ա.Մ.Սոցիալ-հոգեբանական թրեյնինգների գործառնությունը հոգեշտկողական աշխատանքներում, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2019թ, էջ 262-271

Аванесян Армине Мартиновна

ФУНКЦИИ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ТРЕНИНГОВ В ПРОЦЕССЕ ПСИХОРЕГУЛЯЦИИ И ПСИХОКОРРЕКЦИИ СТАРШИХ ШКОЛЬНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности ЖТ. 00.03 “Социальная психология (психология межличностных отношений, семейная, возрастная, педагогическая, групповой деятельности)”.

Защита диссертации состоится 16 октября 2019 года в 12⁰⁰ ч. на заседании специализированного совета психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: г. Ереван, 0010, пр. Тиграна Мец, 17.

Р Е З Ю М Е

Актуальность исследования. В теоретических и практических исследованиях методов социально-психологических тренингов /СПТ/ анализируется и обсуждается их содержание, виды организации, условия, вопросы личностного роста и возможности эффективности развития. В то же время недостаточно изучен вопрос расширения функций социально-психологических тренингов в процессах психорегуляции и психокоррекции старших школьников, хотя в контексте СПТ нетрудно понять возможности коррекции различных проявлений поведения. Следовательно, возникает необходимость дальнейшего расширения функций СПТ в контексте не только конкретных процессов возрастных и индивидуальных особенностей участников тренинга, но и изучения конкретных механизмов, позволяющих рассматривать функции СПТ как механизм, который должен относиться как к субъектам образования, так и к психокоррекционным и психорегуляционным работам, проводимым с ними. Принимая во внимание вышеуказанные противоречия, необходимо рассмотреть СПТ, используемые в сфере образования, с функциями, которые уменьшают существующие противоречия. Это станет возможным, если работа тренинговой группы превратится в работу, специфичную для команды; результаты же в образовании будут более глубокими, всесторонними, личностными, а не только направленными на конкретные поведенческие проявления или иногда имеющими чисто репродуктивное содержание. **Цель исследования.** Основываясь, в частности, на идее командообразования и командоразвития, выявить основы расширения и уточнения функций социально-психологических тренингов, пути их сопоставления в процессах психорегуляции и психокоррекции старших школьников.

Основная гипотеза исследования. Предполагается, что функции СПТ в процессах психорегуляции и психокоррекции старших школьников будут

расширены при условии, если СПТ будут соответствовать содержанию и логике процесса командообразования.

Задачи исследования. В соответствии с целью и гипотезой исследования определены следующие задачи: 1) проанализировать социально-психологический тренинг как метод, основанный на способности групповых воздействий, и на основе теоретического анализа дать определение термину „тренинг“ с точки зрения его функций, 2) сопоставить основные функции психокоррекции, психорегуляции и тренинга с целью определения основных линий совместимости, 3) определить в сфере образования те области и направления, где имеются условия проведения тренингов, особенно в целях психокоррекции и психорегуляции. Опираясь на вышеупомянутые аспекты, обосновать необходимость и возможности использования социально-психологических тренингов среди старших школьников с целью психорегуляции и психокоррекции, 4) обосновать тот подход, согласно которому в социально-психологическом тренинге, благодаря функции командообразования возможно тренинговую группу, состоящую из старших школьников, превратить в команду, а старших школьников - в члены команды, тем самым способствуя процессу психокоррекции и психорегуляции старших школьников, 5) обосновать вопрос эффективности использования социально-психологического тренинга с целью психокоррекции и психорегуляции старших школьников, а также вопрос оценивания достижений каждого участника тренинга.

Предметом исследования является процесс выявления дополнительных функций социально-психологического тренинга и сопоставления их с функциями психокоррекции и психорегуляции. **Методологические основы исследования вытекают** из задач исследования и необходимости установления и обоснования как базовой, так и частичных гипотез исследования. Они основаны на теоретическом анализе работ по теме тренингов, в частности социально-психологических тренингов, ряда авторов /Л. Петровская, Т. В. Зайцев, В. В. Вачков, Ю. Н. Емельянов и др./, а также на возрастных психологических особенностях старших школьников и на работах ряда авторов (Р. Н. Немов, И. С. Кон, А. В. Петровский и др.), посвящённых субъектам образования.

Методы исследования и их обоснованность. Были использованы следующие методы исследования: 1) **метод теоретического анализа**, 2) **тест самооценки психических состояний Айзенка** (Hans Eysenck), 3) **опросники**, 4) **метод интервью**. В частности, был применен метод интервью PARLA: 5) **методика «Определение индекса групповой сплоченности Сипора»**, 6) **социально-психологический тренинг**, 7) **численные методы** (статистические и математические).

Научная новизна исследования. В процессах психорегуляции и психокоррекции старших школьников функции социально-психологических тренингов будут расширены и конкретизированы за счет организации в группе процесса формирования команды.

Теоретическая значимость исследования. Путем пояснения вопросов, отраженных в диссертации, теоретически расширятся границы использования социально-психологических тренингов в сфере образования. Будет обогащена теоретическая база социально-психологических тренингов. Сформируются новые подходы к использованию социально-психологических тренингов на разных уровнях образования, в частности, в старшей школе могут быть внедрены новые формы учебно-воспитательной, психорегуляционной и психокоррекционной работы со старшими школьниками.

Практическая значимость исследования. Данные и результаты экспериментального исследования могут быть использованы для организации в сфере образования целенаправленного социально-психологического тренинга: основываясь на очевидных преимуществах процесса формирования команды, особенно в процессах психорегуляции и психокоррекции старших школьников.

Достоверность исследования обеспечивается использованием надежных и валидных методик, математико-статистическим анализом данных, объемом исследуемого контингента.

Структура диссертации. Работа состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений. Представлены 24 таблицы, 18 рисунков. Объем работы составляет 174 страницы.

Avanesyan Armine M.

THE FUNCTIONS OF SOCIAL-PSYCHOLOGICAL TRAININGS IN THE PROCESS OF HIGH SCHOOL STUDENTS' PSYCHO-CORRECTION AND PSYCHO-REGULATION

Thesis for the degree of Candidate of Psychological Sciences in the field of Social Psychology (interpersonal relationships, family, age, pedagogical, group activities).

The defence of the thesis will take place at 12:00 o'clock on October 16th, 2019 at the session of Degree Awarding commission 064 specialized in Psychology of the Higher Attestation Commission of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

SUMMARY

The Relevance of the research: In the theoretical experimental research on Social-psychological Training methods (A. Vidai, I. Vachkov, L. Petrovskaya, T. Morozova, N. Sidarenko, G. Monina and etc.) the opportunities of contents, organizational forms, conditions, personal growth and efficiency of development of these methods are discussed and analyzed. While the expansion of the Social-Psychological Training (SPT) functions, constantly observed in various processes, haven't been sufficiently dealt with the processes of psycho-correction and psycho-regulation of high school students, though in its context SPT has also been perceived with the possibility to correct various behavioral manifestations. Therefore, it is necessary to connect further expansion of the SPT functions not only with specific processes, the age and individual characteristics of the training participants, but also to study specific mechanisms which may allow to propose a specific mechanism with the consideration of the SPT functions, which must

refer to both the individuals of education and the processes of psycho-corrections and psycho-regulations organized with them. Considering above-presented interpretations, it is necessary to study the SPT functions, applied in education, in such context, which will decrease the existing contradictions. It will be possible if the training group transfer into team group, and the results refer both to the sphere of education (deeper, universal, personal) and specific behavioral manifestations and separate skills. **The goal of the research:** to reveal the bases of expansion and specification of the functions of social-psychological trainings in the process of high school students' psycho-correction and psycho-regulation, identify the ways of their correlations basing, in particular, on the idea of team formation and team building. **The main hypothesis of the research:** it is assumed that the SPT functions will be expanded and specified in the processes of high school students' psycho-corrections and psycho-regulations, if the SPT corresponds to the content and logic of team building process. **The objectives are derived** from the goal and hypotheses **of the research:** 1) **to analyze** the social-psychological training as a method based on group impact possibilities, define the "training" term basing on theoretical analyzes from the viewpoint of functions, 2) **to conform** the main functions of psycho-correction, psycho-regulation and trainings for the aim of determining the degree of compatibility, 3) **to reveal** the zones and directions in the sphere of education in which the applying conditions of training are presented, especially with a purpose of psycho-correction and psycho-regulation. Basing on the disclosure of above-presented aspects, to point out the importance and possibilities of the application of social-psychological trainings with the purpose of psycho-corrections and psycho-regulations among high school students, 4) **to justify** the approach, that due to the team building function of the social-psychological training it is possible to transfer the training group of high school students into a team, and high school students into team members contributing to the process of high school students' psycho-correction and psycho-regulation, 5) **to clarify** the issue of effectiveness of the training through psycho-corrections and psycho-regulations of high school students, as well as the assessment of the achievement of each participant.

The subject of the research is the process of revealing extra functions of the social-psychological trainings with the functions of psycho-correction and psycho-regulation. **Methodological bases of the research** are derived from above-presented problems and from the need of confirmation and proof of the basic and partial hypothesis. Those are based on some authors' theoretical analyses of SPT (L. A. Petrovskaja, T. V. Zaitsev, I. V. Vachkov, Yu. N. Yemelianov, R. Bakli, G. Caple and others), and some authors' works on high school students' age psychological peculiarities and aspects of education (R. S. Nemov, I. S. Kon, A. V. Petrovskii and others).

Research methods and justification of their application.

The following methods have been used in this dissertation: 1) **theoretical analysing method** 2) **Psychological diagnoses method:** Izenk's self-assessment test of mental state, 3) **Questionnaires**, 4) **Interview method.** Particularly we have used the PARLA system

of interviewing, 5) **Misho's methodology for "determining group cohesion index"**, 6) **Social-psychological training method**, 7) **Quantitative method (statistical and mathematical)**.

Scientific novelty of the research. In the process of psycho-correction and psycho-regulation of high school students, the social-psychological training functions are expanded and specified due to team building processes in the group.

The theoretical significance of the research. With the clarification of problems reflected in the dissertation, the limits and spheres of application of the social-psychological training in the educational system will be theoretically expanded. The theoretical base on the social-psychological trainings will be enriched. New approaches for application of social-psychological trainings will be developed as well as from viewpoint of the introduction of investing new methods of psycho-correction and psycho-regulation in education, personal growth and self-improvement in the work with the high school students.

The practical significance of the research. The actual data and output results of the experimental studies can be used in education while organizing targeted social-psychological trainings basing on obvious advantages of team building processes, especially in the psycho-correction and psycho-regulation processes of high school students.

The reliability of the research is provided by application of valid and reliable research methods chosen for solution of the defined objectives of the research, the research sample size and the mathematical-statistical data analysis.

The structure and the volum of the dissertation. The volume of the dissertation is 174 computer pages, annex with 16 pages. The dissertation consists of introduction, three chapters, conclusions, a list of reference and annex. Each chapter of the dissertation contains sub-chapters in which 24 tables and 18 Charts are presented.

A handwritten signature in black ink, consisting of stylized, overlapping letters and flourishes.